


Հաստատված է «Ակտինա Կապիտալ» ՍՊԸ-ի
մասնակիցների 2026 թվականի հունվարի 23-ի
թիվ 2026/01/23-01 արձանագրությամբ

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝

Սեդրեկ Գալոյան



23.01.2026թ.

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2026

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույն արժեթղթերի փաթեթի կառավարման կանոնակարգով (այսուհետ՝ **«Կանոնակարգ»**) սահմանվում են «Ակտինա Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման կանոնները:
- 1.2 Կառավարիչը Ծառայությունները մատուցում է համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի, Կառավարչի ներքին իրավական ակտերի, ինչպես նաև Կառավարչի և Հաճախորդի միջև կնքված համաձայնագրերի, պայմանագրերի կամ այլ փաստաթղթերի:
- 1.3 Կանոնակարգը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագիրը և Կանոնակարգը միասին համարվում են վավեր, կողմերի (Կառավարչի և Հաճախորդի) համաձայնությունն ու կամքն ամբողջությամբ արտահայտող, գործադրելի և կողմերի կողմից կատարման ենթակա դրույթներ պարունակող փաստաթուղթ. ընդ որում, Պայմանագրի և Կանոնակարգի դրույթների միջև հակասության դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրի դրույթներին:
- 1.4 Կանոնակարգը հանդիսանում է հրապարակային փաստաթուղթ, որին կարող է ծանոթանալ ցանկացած շահագրգիռ անձ: Կանոնակարգը ենթակա է հրապարակման Կառավարչի պաշտոնական կայքում:
- 1.5 Կանոնակարգում օգտագործվող հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը.

Աձանցյալ. Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված Գործարքները,

Ակտիվներ. Հաճախորդին սեփականության իրավունքով պատկանող՝ կառավարչի Հավատարմագրային կառավարմանը հանձնված Արժեթղթեր, Աձանցյալներ և Դրամական միջոցներ,

Անվանադիրոջ հաշիվ. պահառուի (օտարերկրյա պահառուի) մոտ օտարերկրյա պահառուի (պահառուի) անունով բացված Արժեթղթերի հաշիվ, որում հաշվառվում են վերջինիս Հաճախորդներին պատկանող Արժեթղթերը,

Աշխատանքային օր. շաբաթ կամ կիրակի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ տոնական կամ հիշատակի ոչ աշխատանքային օր չհանդիսացող ցանկացած օրացուցային օր,

Արժեթղթերի հաշիվ. Հաճախորդի Արժեթղթերի հաշվառման հատուկ հաշիվ,

Արժեթղթերի փաթեթի կառավարում կամ **Հավատարմագրային կառավարում.** Կառավարչի կողմից պարզևավճարի դիմաց իր տիրապետմանը հանձնված՝ Հաճախորդին սեփականության իրավունքով պատկանող և նրա կամ Շահառուի օգտին Կառավարչի անունից Արժեթղթերի, Աձանցյալների, Արժեթղթերում կամ

Ածանցյալներում ներդրում կատարելու համար նախատեսված Դրամական միջոցների, Հավատարմագրային կառավարման արդյունքում ստացված Արժեթղթերի, Ածանցյալ ֆինանսական գործիքների և Դրամական միջոցների կառավարում՝ Հաճախորդի կողմից տրված ցուցումներին համաձայն,

Արժեթուղթ. Օրենքի 3-րդ հոդվածի 1-2-րդ, 5-7-րդ կետերով սահմանված գործիքները,

Գործադիր փնտրեն կամ Տնօրեն. Կառավարչի միանձնյա գործադիր մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ և Կառավարչի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Կառավարչի գործունեության ընթացիկ ղեկավարումը,

Գործարք. Արժեթղթերով, Ածանցյալներով և արժույթով գույքային իրավունքների օտարման և ձեռքբերման գործարքներ,

Գործընկեր կազմակերպություն. անձ, որի ներգրավմամբ և/կամ որի միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Կառավարիչը Ծառայություններ է մատուցում Հաճախորդին,

Դրամական միջոցներ. Հաճախորդին պատկանող և նրա կողմից Կառավարչի տիրապետմանը հանձնված՝ Արժեթղթերում և/կամ Ածանցյալներում ներդրումներ կատարելու համար նախատեսված դրամական միջոցներ,

Ըստ գործարքի հաշվետվություն. Կառավարչի կողմից Հաճախորդին տրամադրվող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունը,

Թողարկող. ՀՀ Ֆինանսների նախարարությունը, ԿԲ-ը կամ իրավաբանական անձ, որը ՀՀ կամ այլ երկրի օրենսդրությանը համապատասխան թողարկում է Արժեթղթեր և դրանցով ամրագրված իրավունքների իրականացման առնչությամբ դրանց սեփականատերերի առջև կրում պարտավորություններ,

Թրասթային ընդհանուր դիրք. Կառավարչի կողմից Հավատարմագրային կառավարման շրջանակներում ունեցած բոլոր Դրամական միջոցներով, Ածանցյալներով և/կամ Արժեթղթերով բացված դիրքերի ամբողջություն,

Իմաստավալից հենանիշ. Ներդրումային հայտարարագրով սահմանված ցուցանիշ կամ ցուցանիշների համախումբ, որի հետ համեմատվում է Պորտֆելի եկամտաբերությունը՝ կառավարման արդյունավետությունը գնահատելու նպատակով,

Ծառայություններ. Պայմանագրի հիման վրա Կառավարչի կողմից Հաճախորդին մատուցվող Հավատարմագրային կառավարման ծառայություններ,

Կանոնակարգ 4/06. ԿԲ խորհրդի որոշմամբ հաստատված «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» թիվ 4/06 կանոնակարգը,

Կանոնակարգ 4/07. ԿԲ խորհրդի որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» թիվ 4/07 կանոնակարգը,

Կառավարիչ կամ **Ընկերություն**. «Ակտինա Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը,

Կայք. <https://aktina.am/> հասցեում գտնվող Ընկերության վեբ կայքը:

ԿԲ. ՀՀ կենտրոնական բանկը,

Հաճախորդ. անձ, որը Կառավարչի հետ կնքել է Պայմանագիրը որը օգտվում է / ցանկանում է օգտվել Ընկերության Հավատարմագրային կառավարման ծառայություններից:

Հավատարմագրային կառավարման օբյեկտ. Ակտիվները, ինչպես նաև բոլոր այն Արժեթղթերը, Աժանցյալները և Դրամական միջոցները, որոնք հանձնվել են Հավատարմագրային կառավարման կամ Կառավարչի կողմից ձեռք են բերվել Պայմանագրի հիման վրա Հաճախորդին Ծառայությունների մատուցման արդյունքում,

Հավելյալ պարգևավճար. հաջողության վճար (success fee), որը որոշվում է որպես հաշվետու ժամանակահատվածում ներդրումային եկամտից տոկոսներով արտահայտված մասնաբաժին: Ներդրումային եկամուտը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ակտիվների արժեքի հավելաճն է՝ ի հաշիվ կառավարման ընթացքում կատարված գործարքների, արժեթղթերի արժեքի հավելաճի և այլ եկամուտների (տոկոսներ, շահաբաժիններ, արժեկտրոնային վճարումներ): Հավելյալ պարգևավճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

PF = max { 0; [(NAi – NAn + W – D) – (NAn × BR)] × PR – B }, որտեղ՝

- PF – Հավելյալ պարգևավճար,
- NAi – Ակտիվների արժեքը հաշվետու ժամանակահատվածի վերջում,
- NAn – Ակտիվների սկզբնական արժեքը,
- D – Ակտիվների համալրում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում,
- W – Ակտիվների դուրս բերում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում,
- BR – համապատասխան հաշվետու ժամանակահատվածի համար Իմաստալից հենանիշի (benchmark) հիման վրա հաշվարկված եկամտաբերության չափը,
- PR – հավելյալ պարգևավճարի դրույք,
- max(0, ...) – նշանակում է, որ եթե կառավարման արդյունքը չի գերազանցել համար Իմաստալից հենանիշը, հավելյալ պարգևավճար չի գանձվում,
- B – արդեն գանձված հավելյալ պարգևավճարները:

Հավելյալ պարգևավճարը վճարվում է միայն այն դրական եկամտի մասից, որով պորտֆելի փաստացի եկամտաբերությունը գերազանցում է համապատասխան Իմաստալից հենանիշի եկամտաբերությունը հաշվետու ժամանակահատվածում: Հավելյալ պարգևավճար չի վճարվում, եթե դրա հաշվարկման արդյունքում այն հավասար է զրոյի կամ ունենում է բացասական մեծություն,

Հիմնական պարզեցումներ. Ծառայությունների համար վճար, որը որոշվում է որպես կառավարման տակ գտնվող Ակտիվների արժեքի մասնաբաժին՝ արտահայտված տարեկան տոկոսներով և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

MF = NA * MR, որտեղ՝

- MF՝ հիմնական պարզեցում,
- NA՝ Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության կառավարման տակ գտնվող Ակտիվների միջին հաշվարկային արժեքը,
- MR՝ հաշվետու ժամանակահատվածի համար հաշվարկված պարզեցումների տարեկանացված դրույք:

ՀԿ աշխատակից. Կառավարչի աշխատակից, որն ունի համապատասխան որակավորում,

Ներդրումային հայտարարագիր. Հավատարմագրային կառավարման օբյեկտ հանդիսացող Դրամական միջոցների ներդրման ուղղությունները, պայմաններն ու կարգը, այդ թվում՝ ներդրման կառուցվածքը և սահմանափակումները սահմանող փաստաթուղթ,

Ներդրումային կոմիտե. Ընկերությունում ստեղծվող կոլեգիալ մարմին, որը սույն Կանոնակարգով սահմանված դեպքերում կայացնում է ներդրումային որոշումներ,

Շահերի բախման բացառման և կանխարգելման կանոնակարգ. Կառավարչի՝ «Շահերի բախման բացառման և կանխարգելման» կանոնակարգը, որը սահմանում է Կառավարչի կողմից իրականացվող Գործարքների արդյունքում Հաճախորդների հետ հնարավոր շահերի բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման ընթացակարգը,

Պահառու. Օրենքին և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան Պահառուական գործառնության իրականացման թույլտվություն ունեցող անձ:

Պահառուական գործառնություն. Օրենքով, դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով, պահառության պայմանագրով սահմանված կարգով Պահառուի կողմից Արժեթղթերի հաշիվներում կատարվող գրառումների և այլ գործողությունների ամբողջություն,

Պայմանագիր. Հաճախորդի և Կառավարչի միջև կնքված Ծառայությունների մատուցման համաձայնագիրը, պայմանագիրը կամ այլ փաստաթուղթ,

Պրոֆեսիոնալ հաճախորդ. ինքնուրույն ներդրումային որոշումներ կայացնելու և դրանցից բխող ռիսկերը գնահատելու համար համապատասխան գիտելիքներ և փորձ ունեցող Հաճախորդ,

Օրենք. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը:

- 1.6 Կանոնակարգում օգտագործվող այլ հասկացությունները սահմանված չլինելու դեպքում ունեն Օրենքում և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերում սահմանված նշանակությունը, իսկ դրանցում սահմանված չլինելու դեպքում՝

միջազգային գործարար սովորույթներով այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

1.7 Եթե Կանոնակարգի որևէ դրույթի կոնկրետ համատեքստից ակնհայտորեն այլ բան չի բխում, դրա դրույթների մեկնաբանության սկզբունքները հետևյալն են.

- ցանկացած փաստաթղթի՝ ներառյալ, բայց առանց սահմանափակման՝ Պայմանագրի վկայակոչումը, մեջբերումը կամ դրան հղումը ենթադրում է տվյալ փաստաթղթի գործող տարբերակի, ներառյալ՝ դրա բոլոր փոփոխություններն ու լրացումները, մեջբերումը, վկայակոչումը կամ դրան հղումը, եթե տվյալ վկայակոչման, մեջբերման կամ հղման մեջ հատուկ նշումով սահմանված չէ հակառակը,
- կետերին բոլոր հղումները վերաբերում են Կանոնակարգի կետերին, եթե հատուկ նշումով սահմանված չէ հակառակը,
- գլուխների անվանումներն ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն ազդում դրանց բովանդակության նշանակության և/կամ մեկնաբանության վրա,
- եզակի թվով սահմանված հասկացությունները նաև արտահայտում են նույն հասկացության հոգնակի թիվը ու հակառակը, եթե այլ բան չի բխում հասկացության կիրառման մասնավոր դեպքից,
- ցանկացած անձի վկայակոչումը վերաբերում է նաև օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավաչափ հիմքերով նրան փոխարինող անձին, նրա ներկայացուցչին կամ իրավահաջորդին,
- Կանոնակարգում օգտագործվող «սույն» բառը և դրա հոլովածները, դրանցով կազմված արտահայտությունները և նման նշանակություն ունեցող այլ բառերը վերաբերում են տվյալ դրույթը պարունակող կետին, բացառությամբ «սույն կանոնակարգ» արտահայտությունից, որը ենթադրում է ամբողջ կանոնակարգը, և «սույն բաժին» արտահայտությունից, որը ենթադրում է Կանոնակարգի որևէ բաժինը:

1.8 Կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Կառավարչի կողմից միակողմանիորեն: Կառավարիչը սույն Կանոնակարգում իրականացված փոփոխությունների և լրացումների մասին նախապես ծանուցում է Հաճախորդներին համաձայնեցված էլեկտրոնային փոստին համապատասխան ծանուցում ուղարկելու և/կամ Ընկերության Կայքում հրապարակելու միջոցով: Այն դեպքում, երբ կանոնակարգում փոփոխությունը հանգեցնում է Ծառայությունների սակագների, միջնորդավճարների և այլ ծախսերի բարձրացմանը, Կառավարիչը ծանուցում է Հաճախորդներին այդպիսի փոփոխության մասին փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 20 օրացույցային օր առաջ՝ հիմք ընդունելով Կանոնակարգ 4/07-ով սահմանված կարգավորումները:

2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- 2.1 Պայմանագրով և Կանոնակարգով կարգավորվում են Կառավարչի կողմից Հաճախորդին Արժեթղթերի փաթեթի կառավարման Ծառայությունների մատուցման հետ կապված իրավահարաբերությունները:
- 2.2 Հաճախորդի կողմից Կառավարչի Հավատարմագրային կառավարմանը հանձնվող Ակտիվների արժեքը չի կարող պակաս լինել 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամից: Առանձին դեպքերում նշված շեմը կարող է վերանայվել Գործադիր տնօրենի որոշմամբ:
- 2.3 Կառավարչի կողմից Հաճախորդին Ծառայությունների մատուցումը կարող է իրականացվել.
- 2.3.1 Կառավարչի կողմից մշակված՝ Հավատարմագրային կառավարման ռազմավարություններից մեկին համապատասխան,
- 2.3.2 Հաճախորդի համար Հավատարմագրային կառավարման անհատական ռազմավարության մշակմամբ:
- 2.4 Մինչև Ծառայությունների մատուցման սկիզբը և Պայմանագրի կնքումը Հաճախորդն ընտրում է Կառավարչի մշակած ռազմավարություններից մեկը կամ ներկայացնում է այլ կամ առանձնահատուկ պահանջներ, որոնց հիման վրա Կառավարիչը Հաճախորդի համար կառուցում է նոր անհատական ռազմավարություն:
- 2.5 Մինչև Ծառայությունների մատուցման սկիզբը և Պայմանագրի կնքումը Հաճախորդը ՀԿ աշխատակցի հետ համատեղ որոշում է ռիսկի ընդունելի աստիճանը, որին համապատասխան հետագայում ձևավորվում և կառավարվում է նրա Արժեթղթերի փաթեթը: Ռիսկի ընդունելի աստիճանը որոշելու նպատակով Կառավարիչը տեղեկացնում է Հաճախորդին Արժեթղթերում ներդրումներ կատարելիս հավանական՝ Կանոնակարգի 11-րդ բաժնում և Պայմանագրում նկարագրված ռիսկերի և դրանք նվազեցնելու հնարավորությունների մասին:
- 2.6 Հաճախորդի կողմից Կանոնակարգի 2.4. կետով սահմանված կարգով ռազմավարության ընտրությունից հետո ՀԿ աշխատակիցը կազմում է Ներդրումային հայտարարագիր՝ Կանոնակարգի ՀԱՎԵԼՎԱԾ 1-ով հաստատված ձևով: Ներդրումային հայտարարագիրը ենթակա է հաստատման Գործադիր տնօրենի կողմից: Ներդրումային հայտարարագիրը ՀԿ աշխատակցի կողմից ներկայացվելուց հետո 1 (մեկ) Աշխատանքային օրվա ընթացքում Գործադիր տնօրենը հաստատում է այն կամ տալիս է բացասական եզրակացություն՝ նշելով իր առարկությունները: Այդպիսի պարագայում կազմվում է նոր Ներդրումային հայտարարագիր:
- 2.7 Հաճախորդի Ակտիվների՝ Կառավարչի Հավատարմագրային կառավարմանը փոխանցելը չի հանգեցնում դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման:

2.8 Հավատարմագրային կառավարման հանձնված Ակտիվներն առանձնացվում են Կառավարչի միջոցներից և պահվում են առանձին հաշիվներում:

3 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Հաճախորդի Ակտիվների հանձնումը Կառավարչին տեղի է ունենում Ընդունման/հանձնման ակտի ստորագրմամբ՝ Կանոնակարգի ՀԱՎԵԼՎԱԾ 2-ով հաստատված ձևով:

3.2 Հաճախորդը կարող է Հավատարմագրային կառավարման համար տրամադրել լրացուցիչ Ակտիվներ Պայմանագրի գործադրության ողջ ընթացքում՝ Ակտիվների ընդունման/հանձնման ակտի համաձայն:

3.3 Պայմանագրի հիման վրա Կառավարչի կողմից Հաճախորդին Ծառայությունների մատուցումն իրականացվում է հետևյալ կարգով.

3.3.1 հասանելի հետազոտական նյութերի հիման վրա ՀԿ աշխատակիցն իրականացնում է ֆինանսական շուկաների և առանձին Թողարկողների վերլուծություն,

3.3.2 հաշվարկվում են եկամտաբերությունն ու ռիսկերը: Գնահատվում և կանխատեսվում է առանձին Թողարկողների վերաբերյալ ամբողջ շուկայական տեղեկատվությունը, տրվում է կանխատեսվող եկամտաբերության ու ռիսկերի մակարդակի մասին եզրակացություն,

3.3.3 հիմնվելով Կանոնակարգի 3.4.1. և 3.4.2. կետերում հիշատակված վերլուծությունների վրա և ելնելով Արժեթղթերի փաթեթի կառավարման ռազմավարությունից, որը նախապես համաձայնեցվել է Հաճախորդի հետ և ներառվել Ներդրումային հայտարարագում՝ ՀԿ աշխատակիցը կազմում է Արժեթղթերի փաթեթի կառուցվածքը, հաշվարկում փաթեթում ընտրված յուրաքանչյուր Արժեթղթի օպտիմալ մասնաբաժինը և կայացնում է ներդրումային որոշումներ,

3.3.4 ՀԿ աշխատակիցը գրանցում է ներդրումային որոշումներն էլեկտրոնային գրանցամատյանում: ՀԿ աշխատակիցը կազմում է հանձնարարականները և դրանք հաղորդում կատարման, ինչպես նաև Գործադիր տնօրենի ստորագրմանն է ներկայացնում գործընկերների հետ կնքված այն պայմանագրերը, որոնք անհրաժեշտ են Հավատարմագրային կառավարման նպատակով իրականացվող Գործարքների կատարման համար,

3.3.5 Արժեթղթերով իրականացված Գործարքներն արտացոլվում են Թրասթային ընդհանուր դիրքում, որին անընդհատ հետևում են Կառավարչի աշխատակիցները և իրականացնում ռիսկերի գնահատում. Հավատարմագրային կառավարման ռազմավարությունից շեղվելու դեպքերում ՀԿ աշխատակիցն իրականացնում է դիրքերի համապատասխանեցում Ներդրումային հայտարարագին,

- 3.3.6 Ընկերության տնօրենը Թրաստային ընդհանուր դիրքի նկատմամբ իրականացնում է ներքին վերահսկողություն:
- 3.3.7 Այն դեպքում, երբ ՀԿ աշխատակցի կողմից կայացվող ներդրումային որոշման կամ միմյանց հետ փոխկապակցված մի քանի ներդրումային որոշումների շրջանակներում ներդրման չափը գերազանցում է 50,000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլարը կամ դրան համարժեք՝ այլ արժույթով արտահայտված գումարը, համապատասխան ներդրումային որոշումը ենթակա է հաստատման Ներդրումային կոմիտեի կողմից:

4 ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱԴՐՈՒՄԸ

- 4.1 Կառավարիչն իրականացնում է Հաճախորդների Դրամական միջոցների առանձնացված ներքին հաշվառում:
- 4.2 Հաճախորդի Դրամական միջոցները հաշվառվում և պահվում են Կառավարչի կողմից որևէ առևտրային բանկում բացված անվանատիրոջ հաշվում՝ սույն Կանոնակարգով ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված գործառնությունների իրականացման նպատակով: Անվանատիրոջ հաշվում առկա՝ Հաճախորդի Դրամական միջոցները սեփականության իրավունքով չեն պատկանում Կառավարչին և կարող են օգտագործվել բացառապես Կառավարչի կողմից սույն Կանոնակարգով, Պայմանագրով և կիրառելի օրենսդրությամբ սահմանված ներդրումային ծառայությունների մատուցման համար:
- 4.3 Հաճախորդի Արժեթղթերը հաշվառվում և պահվում են հաճախորդի անունով բացված արժեթղթերի հաշվում: Արժեթղթերի հաշիվը սպասարկող Գործընկեր կազմակերպությունը ընտրելիս, Ընկերությունը պարտավորվում է գործել բարեխղճորեն և առաջնորդվել Հաճախորդի լավագույն շահերով:
- 4.4 Հաճախորդը լիազորում է Կառավարչին տնօրինելու իր Արժեթղթերի հաշիվը և այդ հաշվում առկա ակտիվները (արժեթղթերը)՝ տալով համապատասխան գրավոր համաձայնություն, լիազորագիր Կառավարչին և/կամ այլ անհրաժեշտ փաստաթղթեր:
- 4.5 Հաճախորդի կողմից Կառավարչին Դրամական միջոցների փոխանցումն իրականացվում է Կանոնակարգի 4.2. կետում նշված բանկային հաշվի վրա՝ փոխանցման միջոցով: Կառավարչի կողմից Դրամական միջոցները ստացված են համարվում Կանոնակարգի 4.2. կետով սահմանված բանկային հաշվին փոխանցման պահից:
- 4.6 Հաճախորդի կողմից Կառավարչին Արժեթղթերի փոխանցումն իրականացվում է Կանոնակարգի 4.3. կետով սահմանված արժեթղթերի հաշվի վրա փոխանցման միջոցով: Կառավարչի կողմից Արժեթղթերը ստացված են համարվում Կանոնակարգի 4.3. կետով սահմանված Արժեթղթերի հաշվին փոխանցման պահից:

5 ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1 Նախքան Պայմանագրի կնքումը և Ծառայությունների մատուցումը Կառավարիչը Հաճախորդին պետք է տրամադրի տեղեկատվություն հետևյալի մասին.
- 5.1.1 Կառավարչի և Ծառայությունների մասին,
- 5.1.2 Արժեթղթերի, Աձանցյալ ֆինանսական գործիքների և դրանց հետ առնչվող ռիսկերի մասին,
- 5.1.3 Գործարքների կնքման վայրի (միջոցի) մասին (ֆոնդային բորսա, այլ կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա),
- 5.1.4 կիրառելի վճարների և ծախսերի մասին,
- 5.1.5 Արժեթղթերի փաթեթի արժեքի գնահատման մեթոդի և հաճախականության մասին,
- 5.1.6 Արժեթղթերի այն տեսակների, որոնք կարող են ընդգրկվել փաթեթում, և այն Գործարքների մասին, որոնք կարող են իրականացվել այդ Արժեթղթերի Հավատարմագրային կառավարման շրջանակներում:
- 5.2 Իր և իր կողմից մատուցվող Ծառայությունների մասին Կառավարիչը Հաճախորդին տրամադրում է հետևյալ տեղեկությունները.
- 5.2.1 անվանումը և հիմքերը, որոնցով Կառավարիչն իրավասու է մատուցել Ծառայությունները, ինչպես նաև Կառավարչին լիցենզավորած և (կամ) գրանցած իրավասու մարմնի անվանումը և Կապի հուսալի միջոցները,
- 5.2.2 տեղեկություններ այն մասին, թե ինչ լեզուներով Հաճախորդը կարող է կապ հաստատել Կառավարչի հետ և ստանալ փաստաթղթեր և այլ տեղեկություններ,
- 5.2.3 տեղեկություններ Կառավարչին ներկայացվող հաշվետվությունների, դրանց ներկայացման հաճախականության և ժամկետների, ինչպես նաև ներկայացման կարգի մասին,
- 5.2.4 Շահերի բախման բացառման և կանխարգելման կանոնակարգի համառոտ նկարագիրը (Հաճախորդի պահանջի դեպքում՝ Շահերի բախման բացառման և կանխարգելման ամբողջ կանոնակարգ):
- 5.3 Արժեթղթերի, Աձանցյալ ֆինանսական գործիքների և դրանց հետ առնչվող ռիսկերի մասին Հաճախորդին տրամադրվող տեղեկատվությունը ներկայացված է Կանոնակարգի 11-րդ բաժնում:
- 5.4 Ծախսերի և միջնորդավճարների մասին Կառավարիչը Հաճախորդին տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը.
- 5.4.1 Ծառայություններից օգտվելու համար Հաճախորդի կողմից վճարման ենթակա համախառն գումարը՝ ներառյալ բոլոր միջնորդավճարները, ծախսերը և այլ վճարները, ինչպես նաև բոլոր հարկային վճարները, որոնք պահվում են Կառավարչի կողմից՝ որպես Հաճախորդի հարկային գործակալ: Եթե հնարավոր

- չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա ներկայացվում է դրա հաշվարկման կարգը,
- 5.4.2 Եթե Կանոնակարգի 5.4.1. կետում նշված համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում են արտարժույթը, փոխանակման կուրսը և դրա հետ կապված ծախսերը,
- 5.4.3 վճարումները կատարելու եղանակները:
- 5.5 Հաճախորդը տեղեկացվում է, որ Արժեթղթերի փաթեթի գնահատման հիման վրա հաշվարկված եկամտաբերությունը Ներդրումային հայտարարագրով սահմանված պարբերականությամբ համեմատվելու է Ներդրումային հայտարարագրում սահմանված իմաստալից հենանիշի հետ: Իմաստալից հենանիշ սահմանելիս հաշվի են առնվում Հաճախորդի կողմից ընտրված ռազմավարությունը, այն Արժեթղթերի, Աժանցյալների տեսակները, որոնք կարող են ընդգրկվել փաթեթում և այն Գործարքները (ներառյալ սահմանափակումները), որոնք կարող են իրականացվել այդ Արժեթղթերի, Աժանցյալների կառավարման շրջանակներում: Որպես իմաստալից հենանիշ կարող են կիրառվել՝
- 5.5.1 առաջատար բանկերի ավանդների տոկոսադրույքները կամ դրանց հիման վրա կազմված միջինացված ցուցանիշները,
- 5.5.2 միջբանկային պարտքի շուկայի ցուցանիշներ (LIBOR և այլն),
- 5.5.3 պետական պարտքերի տոկոսադրույքները կամ դրանց հիման վրա հաշվարկված միջինացված ցուցանիշներ,
- 5.5.4 պետությունը, տարածաշրջանը կամ ճյուղը բնութագրող բորսայական ինդեքսները,
- 5.5.5 գլոբալ բորսայական ինդեքսներ,
- 5.5.6 ապրանքային շուկայի ակտիվները կամ դրանց հիման վրա հաշվարկված միջինացված ցուցանիշներ,
- 5.5.7 ապրանքային շուկայի ինդեքսները,
- 5.5.8 պետությունը, տարածաշրջանը կամ ճյուղը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները,
- 5.5.9 գլոբալ մակրոտնտեսական ցուցանիշները,
- 5.5.10 նշված ցուցանիշների հիման վրա որոշակի կշիռներով կառուցված համախմբված ցուցանիշները:
- 5.6 Իմաստալից հենանիշը պետք է բավարարի հետևյալ պայմաններին.
- 5.6.1 պետք է արտահայտի այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը, որը հնարավորություն կտա Հաճախորդին համեմատել կառավարման արդյունավետությունը այլընտրանքային ներդրումների արդյունավետության հետ: Մասնավորապես, իմաստալից հենանիշը պետք է արտահայտի ֆինանսական շուկայում առկա համադրելի այլ գործիքների եկամտաբերությունը, որոնց ժամկետայնությունը, ռիսկը, ներդրման երկիրը և այլ էական բնութագրիչները

- համապատասխանում են, հնարավորինս մոտ կամ համեմատելի են Հաճախորդի կողմից նշված էական բնութագրիչներին,
- 5.6.2 չպետք է հիմնվի Կառավարչի՝ անցյալում ձեռքբերված եկամտաբերության կամ Կառավարչի ազդեցության տակ գտնվող ցուցանիշների վրա:
- 5.7 Իմաստալից հենանիշի կառուցման և ներկայացման սկզբունքները համաձայնեցվում են Ներդրումային հայտարարագրում:
- 5.8 Կառավարիչը Հաճախորդին տեղեկատվություն է տրամադրում իր տիրապետման ներքո գտնվող՝ Հաճախորդի Ակտիվների պաշտպանությանն ուղղված՝ իր կողմից ձեռնարկվող քայլերի մասին:

6 ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 6.1 Մինչև Ծառայությունների մատուցման սկիզբը Կառավարիչը Հաճախորդից պահանջում է անհրաժեշտ տեղեկատվություն ներդրումային գործունեության բնագավառում Հաճախորդի գիտելիքների և փորձի, նրա ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին: Սույն կետում նշված տեղեկատվությունը Հաճախորդը ներկայացնում է Կանոնակարգի ՀԱՎԵԼՎԱԾ 3-ով և/կամ Պայմանագրով սահմանված ձևով:
- 6.2 Գիտելիքների և փորձի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է.
- 6.2.1 տեղեկություններ այն ներդրումային ծառայությունների, Արժեթղթերով Գործարքների և Արժեթղթերի մասին, որոնց հետ որևէ կերպ առնչվել է Հաճախորդը,
- 6.2.2 Հաճախորդի կողմից Արժեթղթերով կատարված Գործարքների բնույթը, ծավալը և հաճախականությունը, ինչպես նաև ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են այդ Գործարքները,
- 6.2.3 Հաճախորդի կրթական մակարդակը, մասնագիտությունը և զբաղմունքը: Իրավաբանական անձ Հաճախորդի դեպքում Կանոնակարգի ՀԱՎԵԼՎԱԾ 3-ով սահմանված հարցաթերթիկը լրացվում է վերջինիս այն ղեկավարի, աշխատակցի կամ այլ անձի կողմից, որն իրավասու է Հաճախորդի անունից Գործարքներ կնքել:
- 6.3 Հաճախորդի ֆինանսական վիճակի մասին տեղեկատվությունը ներառում է.
- 6.3.1 Հաճախորդի կանոնավոր եկամտի աղբյուրները և մեծությունը,
- 6.3.2 Հաճախորդի ընդհանուր և իրացվելի ակտիվները,
- 6.3.3 տեղեկատվություն Հաճախորդի ֆինանսական ներդրումների և անշարժ գույքի մասին,
- 6.3.4 Հաճախորդի կանոնավոր ֆինանսական արտահոսքերը:
- 6.4 Հաճախորդի ներդրումային նպատակների մասին տեղեկատվությունը ներառում է.
- 6.4.1 այն ժամանակահատվածը, որի ողջ ընթացքում Հաճախորդը ցանկանում է պահել այդ ներդրումը,

- 6.4.2 ռիսկերի նկատմամբ իր նախապատվությունը և դրանց շրջանակը,
- 6.4.3 կատարվող ներդրման նպատակը:
- 6.5 Կանոնակարգի 6.1. կետում նշված տեղեկատվությունը չստանալու դեպքում Կառավարիչն իրավունք չունի Հաճախորդին հորդորել որևէ Արժեթղթում ներդրում կատարել:
- 6.6 Եթե Կանոնակարգի 6.1. կետով սահմանված կարգով Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա Կառավարիչը գտնում է, որ տվյալ Ծառայությունը կամ Արժեթուղթը չի համապատասխանում Հաճախորդի պահանջներին, ապա Կապի հուսալի միջոցներով զգուշացնում է Հաճախորդին այդ մասին:
- 6.7 Մինչև Ծառայությունների մատուցումը Կառավարիչը Հաճախորդին հնարավորություն է տալիս ծանոթանալու Ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին:

7 ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

- 7.1 Նախքան Ծառայությունների մատուցումը և Պայմանագրի կնքումը Կառավարիչը Կանոնակարգով, Պայմանագրով, Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով և Կանոնակարգ 4/07-ով սահմանված կարգով դասակարգում է Հաճախորդներին որպես Պրոֆեսիոնալ և ոչ Պրոֆեսիոնալ Ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր Ծառայությունների կամ որևէ Գործարքի կամ Արժեթղթերի որևէ տեսակով (դասով) Գործարքների մասով:
- 7.2 Կանոնակարգ 4/07-ով սահմանված չափանիշներով Հաճախորդի նախաձեռնությամբ վերջինիս որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգումը վավեր համարվելու նպատակով Կառավարիչն իրականացնում է Հաճախորդի գիտելիքների և փորձի գնահատում: Հաճախորդի գիտելիքների և փորձի գնահատումը պետք է հավաստիացնի, որ Հաճախորդը Ծառայություններից օգտվելու, ներդրումային որոշումներ կայացնելու և դրանց հետ կապված ռիսկերն ընկալելու համապատասխան ունակություն և գիտելիք ունի: Հաճախորդի գիտելիքների և փորձի գնահատումն իրականացվում է Կանոնակարգի 6.2. կետով սահմանված կարգով Հաճախորդի տրամադրած տեղեկատվության հիման վրա: Հաճախորդի գնահատման արդյուքների հիման վրա կազմվում է Գործադիր տնօրենի կողմից ստորագրված արձանագրություն/փաստաթուղթ՝ Գործադիր տնօրենի որոշմամբ սահմանված ձևով, որը ներառում է Հաճախորդի գնահատման արդյունքերը՝ պատշաճ հիմնավորմամբ:
- 7.3 Կառավարիչը Հաճախորդին որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելիս գրավոր հարցում է կատարում վերջինիս՝ նաև Որակավորված ներդրող համարվելու համաձայնության վերաբերյալ: Հաճախորդի համաձայնության դեպքում որպես

Որակավորված ներդրող գրանցվելու, գրանցումից դուրս գալու, ինչպես նաև ԿԲ ներկայացվող՝ Պրոֆեսիոնալ հաճախորդի կարգավիճակի դադարեցման, Պայմանագրի լուծման և այլ տեղեկատվության փոփոխությունների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Կանոնակարգ 4/07-ով և Կանոնակարգ 4/06-ով:

- 7.4 Եթե Հաճախորդի կողմից տրամադրված կամ այլ կերպ Կառավարչին հասանելի դարձած տեղեկատվության հիման վրա Կառավարչի գնահատականով Հաճախորդն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման վրա դասակարգվել է որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ, կամ եթե Կառավարիչը պարզում է, որ Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ, Կառավարիչն անհապաղ դադարեցնում է Հաճախորդի որպես Պրոֆեսիոնալ դասակարգումը, ինչի մասին 1 (մեկ) Աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հաճախորդին:
- 7.5 Կանոնակարգ 4/07-ով և Պայմանագրով սահմանված՝ Պրոֆեսիոնալ հաճախորդին որպես ոչ Պրոֆեսիոնալ վերաբերվելու հիմքերի առկայության դեպքում Պրոֆեսիոնալ հաճախորդը Կառավարչի կողմից դասակարգվում է ոչ Պրոֆեսիոնալ Կառավարչի հետ կնքված պայմանագրի հիման վրա: Պայմանագրում հստակ ամրագրվում է, թե արդյոք Հաճախորդի ոչ Պրոֆեսիոնալ դասակարգումը վերաբերում է Ծառայություններից որևէ մեկին, բոլոր Ծառայություններին, որևէ Գործարքին, թե Արժեթղթերի որևէ տեսակով (դասով) Գործարքներին:
- 7.6 Սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացնելիս Կառավարիչը կարող է հիմնվել Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ այն դեպքերի, եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք:
- 7.7 Սույն կետով Կառավարիչը տեղեկացնում է Պրոֆեսիոնալ հաճախորդներին, որ Կառավարչի և Պրոֆեսիոնալ հաճախորդի միջև հարաբերություններում որոշակի օրենսդրական պահանջներ չեն գործում:

8 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 8.1 Կառավարիչը Պայմանագրով սահմանված կարգով, Հաճախորդին տրամադրում է Պարբերական և, Հաճախորդի ցանկությամբ, Ըստ գործարքի հաշվետվություններ:
- 8.2 Պարբերական հաշվետվությունը պարունակում է Կանոնակարգ 4/07-ով սահմանված տեղեկությունները և Հաճախորդին տրամադրվում է մինչև հաջորդ ամսվա 15-ը Գործադիր տնօրենի որոշմամբ հաստատված ձևով:
- 8.3 Ըստ Գործարքի հաշվետվությունը Հաճախորդին տրամադրվում է Գործարքի փաստացի իրականացումից հետո 1 (մեկ) Աշխատանքային օրվա ընթացքում՝ Գործադիր տնօրենի որոշմամբ հաստատված ձևով:

8.4 Եթե Հաճախորդը հաշվետվությունները ստանալուց հետո 3 (երեք) Աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացնում հիմնավորված մերժում, ապա հաշվետվությունները համարվում են ներկայացված և ընդունված:

9 ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

9.1 Կառավարչի և Հաճախորդի միջև փաստաթղթաշրջանառությունը և տեղեկատվության փոխանակումը կարող է իրականացվել Պայմանագրով և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

10 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

10.1 Պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը կրում են պատասխանատվություն և պարտավոր են հատուցել այդպիսի չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ մյուս Կողմին պատճառված վնասը՝ Պայմանագրով սահմանված կարգով, ձևերով և բացառություններով:

10.2 Կառավարիչը կրում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն Հաճախորդին դիտավորությամբ կամ անփութությամբ վնաս պատճառելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ Կառավարիչը գործել է ելնելով Հաճախորդի լավագույն շահերից և պատշաճ իրականացրել է իր ֆիդուցիար պարտականությունները:

10.3 Եթե Պայմանագրով նախատեսված չէ լրիվ ծավալով վնասների հատուցում, Կողմերի՝ վնասների հատուցման պարտավորությունը սահմանափակվում է մյուս Կողմին պատճառված իրական վնասով:

10.4 Կառավարիչը պատասխանատվություն չի կրում Ծառայությունների մատուցմանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված երրորդ անձանց գործողությունների կամ անվճարունակության/սնանկության հետևանքով Հաճախորդին պատճառված որևէ վնասի համար, եթե Կառավարիչը համապատասխան երրորդ անձանց ներգրավելիս գործել է ելնելով իր ֆիդուցիար պարտականություններից և ցուցաբերել է պատշաճ ջանասիրություն այդպիսի երրորդ անձանց ուսումնասիրության ընթացքում:

11 ՌԻՍԿԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՂԻ ՈՒ ՌԻՍԿԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ

11.1 Պայմանագրով կարգավորվող իրավահարաբերությունների հետ կապված ռիսկերը լինում են.

11.1.1 **ըստ Արժեթղթերի և Ածանցյալների տեսակների՝**

- **Բաժնետոմս.** բաժնետոմսերի առուվաճառքի Գործարքները սահմանափակ ռիսկով Գործարքներ են. Հաճախորդի կորուստներ կրելու ռիսկը սահմանափակվում է նրա կողմից բաժնետոմսերի գնման համար ծախսված գումարով: Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ որոշակի հանգամանքներում կորուստները կարող են առաջանալ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում: Մասնավորապես, բաժնետոմսերի շուկայում առկա են շուկայական անբարենպաստ գործոններով պայմանավորված իրական վնասի ռիսկեր, օրինակ՝ արժույթային ռիսկ, իրացվելիության ռիսկ, գնային ռիսկ, Թողարկողի սնանկության ռիսկ և այլն,
- **Պարտատոմս.** պարտատոմսերը դասվում են ցածր ռիսկայնության գործիքների շարքին: Այնուամենայնիվ, վերջիններիս ևս բնորոշ են ռիսկի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են արժույթային ռիսկը, իրացվելիության ռիսկը, գնային ռիսկը, թողարկողի սնանկության ռիսկը և այլն,
- **Օպցիոն.** օպցիոնը հանդիսանում է արժեզրկվող ակտիվ, որն ունի գործողության սահմանափակ ժամկետ, և այդ ժամկետը լրանալուց հետո կարող է ամբողջությամբ կորցնել իր արժեքը: Այդ իսկ պատճառով այն համարվում է բարձր ռիսկայնությամբ գործիք: Օպցիոնների առուվաճառքին առավելապես բնորոշ է շատ կարճ ժամանակահատվածում մեծ կորուստներ կրելու ռիսկը,
- **Ֆյուչերս.** ֆյուչերսներով կատարվող Գործարքներին բնորոշ է շատ կարճ ժամանակահատվածում մեծ կորուստներ կրելու ռիսկը,

11.1.2 **ըստ ներդրողի ու ռիսկերի աղբյուրի միջև կապի՝**

- **Անմիջական.** ռիսկի աղբյուրն իրավական հարաբերություններով ուղղակիորեն կապված է ներդրողի հետ,
- **Միջնորդավորված.** ռիսկի աղբյուրն իրավական հարաբերություններով անմիջականորեն կապված չէ ներդրողի հետ, սակայն ռիսկի աղբյուրի մոտ անբարենպաստ հանգամանքների ի հայտ գալու արդյունքում առաջացնում է իրար հաջորդող իրադարձությունների շղթա, որը պատճառ է հանդիսանում ներդրողի միջոցների և/կամ եկամտի կորստի,

11.1.3 **ըստ ռիսկի գործոնների**

- ✓ **Տնտեսական ռիսկ.** անբարենպաստ տնտեսական իրադարձությունների ի հայտ գալու ռիսկ: Հնարավոր են տնտեսական ռիսկերի հետևյալ տեսակները.
- **գլոբալ տնտեսական ռիսկ՝** պայմանավորված համաշխարային ֆինանսական ճգնաժամով,

- *գնային ռիսկ*՝ պայմանավորված գների անբարենպաստ փոփոխություններով,
 - *արժույթային ռիսկ*՝ պայմանավորված արժույթային փոխարժեքների անբարենպաստ փոփոխություններով,
 - *տոկոսային ռիսկ*՝ պայմանավորված տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխություններով,
 - *սղաճային (ինֆլացիոն) ռիսկ*՝ պայմանավորված սղաճով,
 - *իրացվելիության ռիսկ*՝ պայմանավորված որոշակի ժամանակահատվածում Ակտիվի գնման կամ վաճառքի հետ կապված դժվարությունների առաջացմամբ,
 - *վարկային ռիսկ*՝ պայմանավորված Գործընկեր կազմակերպության կողմից իր պարտականությունների չկատարմամբ կամ անպատշաճ կատարմամբ. այդպիսի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառ կարող են հանդիսանալ դեֆոլտը, Արժեթղթերի գնորդի անվճարունակությունը, Թողարկողի անվճարունակությունը և այլն,
- ✓ ***Իրավական փոփոխությունների ռիսկ.*** Արժեթղթերում ներդրումների հետ կապված կորուստների առաջացում՝ պայմանավորված նոր իրավական ակտերի ընդունմամբ կամ գործող իրավական ակտերի էական փոփոխություններով: Իրավական փոփոխությունների ռիսկը ներառում է նաև Արժեթղթերի շուկայի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի կամ առանձին կարգավորումների բացակայությամբ պայմանավորված կորուստների հնարավորությունը,
- ✓ ***Սոցիալ-քաղաքական ռիսկ.*** միջազգային, տարածաշրջանային կամ ներպետական մակարդակներում քաղաքական և տնտեսական արմատական փոփոխությունների, սոցիալական անկայունության, ռազմական գործողությունների, ձեռնարկությունների ազգայնացման, հսկվող ձեռնարկությունների և բնական մոնոպոլիաների գործունեությանը հանրային իշխանության մարմինների միջամտության հետ կապված ռիսկեր,
- ✓ ***Հակաօրինական գործողություններին ռիսկ.*** հանցագործությունների և այլ հակաօրինական գործողությունների (օրինակ՝ փաստաթղթային տեսքով թողարկված արժեթղթերի կեղծում, խարդախություն, անթույլատրելի մուտք համակարգչային համակարգեր և այլն) հետ կապված ռիսկեր: Ներդրողի համար դա հանդիսանում է միջնորդավորված ռիսկ,
- ✓ ***Գործառնական (տեխնիկական, տեխնոլոգիական, կադրային) ռիսկ.*** տեղեկատվական, էլեկտրոնային, էլեկտրական և այլ համակարգերի անսարքության կամ շուկայի ոչ կատարյալ ենթակառուցվածքի թերություններով (այդ թվում՝ գործառնությունների իրականացման տեխնոլոգիաների, կառավարման, հաշվառման և հսկման գործընթացների բացակայությամբ կամ թերություններով, անձնակազմի գործողություններով կամ անգործությամբ) պայմանավորված ուղղակի կամ անուղղակի կորուստների առաջացման ռիսկ:

Կարելի է առանձնացնել գործառնական ռիսկերի հետևյալ խմբերը՝ տեղեկատվական, էլեկտրական, կոմունիկացիոն համակարգերի օգտագործման, անվանական Արժեթղթերի հաշվառման համակարգի հետ կապված ռիսկեր,

- ✓ **Տեխնոգեն ռիսկ.** մարդու տնտեսական գործունեության հետևանքով առաջացող ռիսկեր՝ վթարներ, հրդեհներ և այլն,
- ✓ **Քնական ռիսկ.** ռիսկ, մարդու գործունեությունից անկախ հանգամանքների, օրինակ՝ տարերային աղետների (երկրաշարժ, ջրհեղեղ և այլն) տեղի ունենալու ռիսկ:

11.1.4 Պայմանագրով կարող են սահմանվել նաև լրացուցիչ ռիսկերի ցանկ:

11.1.5 Հաճախորդը գիտակցում է, որ Կանոնակարգի 11.1. կետում նկարագրված ռիսկերի ցանկը սպառիչ չէ:

12 ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.1 Կանոնակարգը, ինչպես նաև վերջինիս փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության մասնակիցների ժողովի (մասնակցի) կողմից:

12.2 Կանոնակարգով չկարգավորված հարցերի նկատմամբ կիրառելի են Պայմանագրի և Ընկերության ներքին իրավական ակտերի դրույթները, այնքանով որքանով դրանք կիրառելի են:

12.3 Կանոնակարգի և Պայմանագրի դրույթների միջև անհամապատասխանությունների կամ հակասությունների առկայության դեպքում գերակայում են Պայմանագրի դրույթները:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ներդրումային Հայտարարագիրը սահմանում է Կառավարչին Հավատարմագրային Կառավարման հանձնված Հաճախորդի Ակտիվների ներդրման նպատակը և դրանց ներդրումային պորտֆելի կառուցվածքը:

2. ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Հաճախորդի Ակտիվների ներդրման նպատակը հանդիսանում է արժեթղթերի պորտֆելի ձևավորումը և կառավարումը՝ ուղղված պորտֆելի արժեքի բարձրացմանը:

3. ՆԵՐԴՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

3.1. Կառավարիչն իր Հավատարմագրային կառավարմանը հանձնված՝ Հաճախորդի Ակտիվները կարող է ներդնել Հայաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս թողարկված և շրջանառվող Արժեթղթերում, Ածանցյալ ֆինանսական գործիքներում:

4. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն հայտարարագրի գործողության ժամկետը սահմանվում է մինչև _____թ.:

5. ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5.1. Կառավարիչն իրեն հանձնված Ակտիվները կարող է ներդնել հետևյալ ֆինանսական գործիքներում՝

- ☐ Բաժնետոմսեր, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթղթեր
- ☐ Ներդրումային ֆոնդերի փայեր
- ☐ Պետական պարտատոմսեր
- ☐ Պետական և կորպորատիվ եվրոպարտատոմսեր
- ☐ Դեպոզիտար ստացականներ
- ☐ Կորպորատիվ պարտատոմսեր և պարտքային այլ արժեթղթեր
- ☐ Ածանցյալ գործիքներ

☐ Այլ գործիքներ

5.2. Ակտիվների կառուցվածքը, որը Կառավարիչը պետք է պահպանի Պայմանագրի ողջ ժամանակի ընթացքում՝

Ա. Պորտֆելի կառուցվածք	
☐ դրամական միջոցներ	_____ %
☐ արժեթղթեր	_____ %
☐ _____	_____ %
Բ. Դրամական միջոցներ	
☐ ՀՀ դրամ	_____ %
☐ ԱՄՆ դոլար	_____ %
☐ Եվրո	_____ %
☐ Ռուբլի	_____ %
☐ Այլ արժույթ	_____ %
Գ. Արժեթղթեր	
☐ բաժնետոմսեր	_____ %
☐ պետական պարտատոմսեր	_____ %
☐ կորպորատիվ պարտատոմսեր	_____ %
☐ այլ արժեթղթեր	_____ %

5.3. Հայտարարագրի 5.1 կետով սահմանված ֆինանսական գործիքների ժամկետայնության որևէ սահմանափակում չի սահմանվում:

5.4. Իմաստալից հենանիշ է սահմանվում՝ _____:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Այն դեպքում, երբ Ակտիվների շուկայական գնի փոփոխությունը հանգեցնում է Հավատարմագրային կառավարման պայմաններին անհամապատասխանության, ապա Կառավարիչը պարտավոր է Ակտիվների կառուցվածքը համապատասխանեցնել այդ պայմաններին առավելագույնը 1 (մեկ) ամսվա ընթացքում:

6.2. Այն դեպքում, երբ նշված անհամապատասխանությունը կատարվել է Կառավարչի կանխամտածված գործողությունների արդյունքում, ապա Կառավարիչը պարտավոր է Ակտիվների կառուցվածքը համապատասխանեցնել Հավատարմագրային կառավարման պայմաններին 10 (տասը) օրվա ընթացքում և փոխհատուցել Հաճախորդի կրած վնասները:

6.3. Արժեթղթերի շուկայական արժեքի գնահատումը

- արտասահմանյան շուկաներում շրջանառվող Արժեթղթերի, Ածանցյալ ֆինանսական գործիքների շուկայական արժեքի գնահատման համար հիմք են հանդիսանում Ընկերության կողմից ընտրված կազմակերպության կողմից տրամադրված գները,
- տեղական շուկայում շրջանառվող Արժեթղթերի, Ածանցյալ ֆինանսական գործիքների շուկայական արժեքի գնահատման համար հիմք են հանդիսանում Ընկերության կողմից ընտրված կազմակերպության կողմից տրամադրված գները:

ԿԱՌԱՎԱՐԻՉ

«Ակտինա Կապիտալ» ՍՊԸ
Գործադիր տնօրեն՝ Սերգեյ Գալոյան

ՀԱՃԱԽՈՐԴ

ՀԱՎԵԼՎԱԾ 2**ԱԿՏԻՎՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ/ՀԱՆՁՆՄԱՆ ԱԿՏ**

Հաճախորդը՝ [.]՝ ի դեմս [.]-ի, հանձնում/ընդունում է, իսկ Կառավարիչը, գործելով ընկերության Կանոնադրության, Ընկերության ներքին կանոնակարգերի հիման վրա, ի դեմս [.]-ի, ընդունում/հանձնում է հետևյալ Ակտիվները.

Դրամական միջոցներ

h/h	Արժույթի տեսակը	Գումարը	Փոխարժեքը ՀՀ դրամով*	Ընդհանուր արժեքը ՀՀ դրամով
1	AMD			
2	USD			
3				
Դրամական միջոցների ընդհանուր արժեքը				

Արժեթղթեր

h/h	Թողարկող/ բորսայական ծածկագիր	Արժեթղթի տեսակը	Անվանական արժեքը	Քանակը	Շուկայական արժեքը	Ընդհանուր արժեքը ՀՀ դրամով
1						
2						
Արժեթղթերի ընդհանուր արժեքը						

Դրամական միջոցների և արժեթղթերի ընդհանուր արժեքը ՀՀ դրամով՝ _____:

ԿԱՌԱՎԱՐԻՉ

«Ակտինա Կապիտալ» ՍՊԸ
Գործադիր տնօրեն՝ Սերգեյ Գալոյան

ՀԱՃԱԽՈՐԴ

*Հավաքարմագրային կառավարման հանձնելու նախորդ օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՓՈՐՁԸ

1. Նշեք այն ներդրումային ծառայությունները, որոնց երբևէ առնչվել եք.
☐ բրոքերային,
☐ արժեթղթերի փաթեթի կառավարում,
☐ այլ:
2. Նշեք այն արժեթղթերը, որոնցում երբևէ կատարել եք ներդրում կամ որոնց առնչությամբ կնքել եք այլ գործարքներ.
☐ բաժնետոմսեր կամ այլ բաժնային արժեթղթեր,
☐ պարտատոմսեր,
☐ ներդրումային ֆոնդերի փայեր,
☐ չեկեր, մուրհակներ,
☐ այլ:
3. Բնութագրեք Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքները (նշեք բնույթը, ծավալը, հաճախականությունը և ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են).

4. Նշեք Ձեր կրթությունը (մասնագիտությունը) և զբաղմունքը.

5. Կատարեք համապատասխանեցում.

Այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում արժեթուղթը թողարկած անձից ստանալ արժեթղթի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք: Վերջինս՝ դրա տիրապետողին իրավունք է տալիս նաև ստանալ արժեթղթի անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ:

1. Պարտատոմս	
--------------	--

2. Մուրհակ Այն արժեթուղթը, որը պարունակում է արժեթուղթ տվողի՝ որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ արժեթուղթ տիրապետողին վճարել դրանում նշված գումարը:
3. Կոնսամենտ Այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրոջ բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը:
4. Չեկ Այն արժեթուղթը, որը հավաստում է արժեթուղթ տվողի (հասարակ) կամ արժեթղթում նշված այլ վճարողի (վճարագիր) որևէ բանով չպայմանավորված պարտավորությունը՝ արժեթղթում նախատեսված ժամկետը լրանալիս որոշակի գումար վճարել արժեթուղթ տիրապետողին (տիրոջը):
5. Բաժնետոմս Ապրանքը տնօրինելու մասին փաստաթուղթը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ տնօրինելու արժեթղթում նշված բեռը և փոխադրելուց հետո ստանալու այն:
6. Ինչպիսի՞ն է պարտատոմսերի գնի և տոկոսադրույքների փոփոխության ռիսկի միջև կապը.
- ☐ ուղիղ համեմատական,
- ☐ հակադարձ համեմատական,
- ☐ այլ:
7. Ներդրումների ո՞ր տեսակին են բնորոշ կայունությունը և բարձր իրացվելիությունը.
- ☐ կայուն,
- ☐ պահպանողական,
- ☐ ագրեսիվ,
- ☐ մասնավոր:
8. Նշվածներից ո՞րն է համարվում լներիջով գործարք.
- ☐ գործարք կնքելու համար նախապես ներդրված ապահովվածության գումարի (մարժայի) և գործարքի ամբողջ գումարի հարաբերություն, որը հավասար է մեկի,
- ☐ գործարք կնքելու համար նախապես ներդրված ապահովվածության գումարի (մարժայի) և գործարքի ամբողջ գումարի հարաբերություն, որը մեծ է մեկից,

- ☐ գործարք կնքելու համար նախապես ներդրված ապահովվածության գումարի (մարժայի) և գործարքի ամբողջ գումարի հարաբերություն, որը մեծ կամ հավասար է հարյուրի,ծ
- ☐ գործարք կնքելու համար նախապես ներդրված ապահովվածության գումարի (մարժայի) և գործարքի ամբողջ գումարի հարաբերություն, որը փոքր է մեկից:

9. Որոշել 1:10 լներիջով կատարված գործարքի ելքը, եթե ակտիվը ձեռք է բերվել 100 ԱՄՆ դոլարով, և նրա գինը նվազել է 1%-ով.

- ☐ +5%,
- ☐ -10%,
- ☐ -5%,
- ☐ +10%:

10. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ գույքի հանձնումը հավատարմագրային կառավարման հանգեցնում է արդյոք գույքի սեփականության իրավունքի փոխանցման.

- ☐ այո,
- ☐ ոչ, բացառությամբ օրենսգրքով սահմանված դեպքերի,
- ☐ ոչ:

- ☐ Հաճախորդը խնդրում է իրեն դասակարգել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ հետևյալ ծառայությունների/գործարքների մասով _____ և տեղյակ է, որ որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում նշված ծառայությունների/գործարքների մասով հաճախորդների պաշտպանության որոշակի օրենսդրական պահանջներ իր հանդեպ չեն գործի:
- ☐ Հաճախորդը համաձայն է որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում նաև համարվել որակավորված ներդրող:

Հաճախորդի ստորագրություն՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ

1. Նշեք Ձեր կանոնավոր եկամտի (աշխատավարձ, թոշակ) աղբյուրները և մեծությունը.

2. Նշեք Ձեր ընդհանուր և իրացվելի ակտիվները.

3. Նշեք Ձեր ֆինանսական ներդրումները և Ձեզ պատկանող անշարժ գույքը.

4. Նշեք Ձեր կանոնավոր ֆինանսական արտահոսքերը.

Հաճախորդի ստորագրություն՝ _____

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

1. Նշեք ժամանակահատվածը, որի ընթացքում ցանկանում եք պահել Ձեր ներդրումը.

- ☐ մինչև 3,
- ☐ 3-10 տարի,
- ☐ ավելի, քան 10 տարի:

2. Նշեք ներդրումների հետ կապված այն ռիսկերը, որոնց տալիս եք նախապատվություն.

3. Ի՞նչ նպատակով եք ներդրում կատարում.

Հաճախորդի ստորագրություն՝ _____

ՀԱՃԱԽՈՐԴԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ազգանունը, անունը և հայրանունը/Անվանում, Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (եթե Հաճախորդը իրավաբանական անձ է՝ պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող ֆիզիկական անձինք)	
Հասցեն	
Կապի միջոցները (հեռախոս, էլեկտրոնային փոստ և այլն)	
Ծննդյան ամսաթիվը	Քաղաքացիությունը
Կրթությունը (գիտական աստիճան/մասնագիտացում)	
Գործունեության ոլորտը (կազմակերպություն/պաշտոն/կապի միջոցներ)	

Ներդրումային ծառայությունները, որոնց առնչվել է Հաճախորդը

Արժեթղթերը, որոնցում Հաճախորդը կատարել է ներդրում կամ որոնց առնչությամբ
կնքել է գործարքներ

Հաճախորդի կողմից Արժեթղթերով կատարված գործարքների բնութագրությունը

Հաճախորդի փորձի և գիտելիքների գնահատման վերոնշյալ արդյունքների հիման վրա
Հաճախորդը դասակարգվում է որպես

Պատասխանատու աշխատակից՝

անուն, ազգանուն

պաշտոն

ստորագրություն

___/___/20__